

Պ. Պապանյան

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԻՇՆ Է

Ընկեր Ստալինի «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը» հանճարն ու աշխատությունը վիժիսարի ազդակ հանդիսացավ մեր իդեոլոգիական բնագավառի աշխատանքների աշխուժացման, հետագա զարգացման ու հարստացման համար:

Դարագլուխ կազմող այդ աշխատության մեջ հիմնովին ջախջախվեց լեզվի մասին Ն. Յա. Մառի իդեալիստական «նոր ուսմունքը», սովետական լեզվաբանությունը մաքրվեց իդեոլոգիական արատներից և հիմք դրվեց լեզվի մասին ստալինյան նոր ուսմունքի:

Սովետական լեզվաբանությունը թևակոխեց իր զարգացման նոր, ավելի բարձր աստիճանը, ամուր կերպով որոշվեցին նրա զարգացման սկզբունքները և ուղիները:

Ընկեր Ստալինի աշխատության մեջ միաժամանակ իրենց բազմակողմանի զարգացումն ստացան մարքսիստական փիլիսոփայության և գրականագիտության արմատական հարցերը, բազիսի և վերնաշենքի փոխհարաբերության, ձևի ու բովանդակության, իդեոլոգիական ձևերի ակտիվ ներգործոն դերի և այլ բազմաթիվ հարցեր:

Ընկեր Ստալինը իր աշխատության մեջ հատկապես նշեց վերնաշենքային կատեգորիաների ակտիվ դերն ու նշանակությունը հասարակության կյանքում:

Ընկեր Ստալինը խոսելով վերնաշենքի այդ կարևոր դերի մասին, ասում է. «Վերնաշենքը ծնունդ է առնում բազիսից, բայց այդ ամենն չի նշանակում, թե այն միայն արտացոլում է բազիսը, թե այն պասսիվ է, շեղոք, անտարբեր է վերաբերվում իր բազիսի ճակատագրին, դասակարգի ճակատագրին, հասարակարգի բնույթին: Ընդհակառակը, լույս աշխարհ գալով, նա դառնում է մեծագույն ակտիվ ուժ, ակտիվորեն օժանդակում է իր բազիսին՝ ձևավորվելու և ամրապնդվելու, ձեռք է առնում բոլոր միջոցները, որպեսզի նոր հասարակարգին օգնի մինչև վերջը ջախջախելու և լիկվիդացնելու հին բազիսն ու հին դասակարգերը»¹:

Ընկեր Ստալինի աշխատության լույսի տակ առանձնահատուկ նշանակություն են ստանում սոցիալիստական վերնաշենքի բոլոր տեսակները՝ ինչպես, օրինակ, փիլիսոփայությունը, գիտությունը, արվեստը, գրականությունը, որոնք կոչված են ծառայելու սովետական բազիսին, ամրապնդելու նրա հիմքերը, ակտիվորեն պայքարելու հին՝ իր դարն ապրած վերնաշենքերից ելող ամեն տեսակի մնացուկների դեմ:

Սովետական գրականությունը սոցիալիստական տնտեսակարգի վերնաշենքային հիմնական ձևերից մեկն է, որ կոչված է ռճալ կերպով արտացոլելու

¹ Ի. Վ. Ստալին, «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը», էջ 13, 1951 թ., Հայպետհրատ:

և հաստատելու մեր երկրում կոմունիզմ կառուցող մարդկանց միտքն ու զգացումները, նրանց աշխատանքային եռանդն ու ստեղծագործական ձգտումները:

Սովետական գրականությունը իր բովանդակությամբ և արտահայտչական միջոցներով կոչված է ակտիվորեն արտացոլելու մեր դարաշրջանի ողջ մեծությունը՝ իր բազմահարուստ կողմերով, սկսած գիտության, տեխնիկայի նվաճումների վերջին խոսքից, մինչև կոմունիզմի գիգանտ կառուցումները:

Մեր գրականությունը կոչված է արտացոլելու այն գոտեմարտը, որ սովետական մարդիկ մղում են՝ բնության վերափոխման համար: Սովետական գրականությունը պետք է արտացոլի այն պայքարը, որ Սովետական Միության գրված խավորությամբ խաղաղության և դեմոկրատիայի ուժերը ամենուրեք մղում են պատերազմի և ռեակցիայի ուժերի դեմ, այն ուժերի, որոնք լծված ամերիկյան իմպերիալիզմի պատերազմական կառքին, ցանկանում են նոր սպանդ բացել երկրագնդի խաղաղասեր ժողովուրդների համար, խոչընդոտ հանդիսանալ մարդկության հետագա առաջադիմությանը, որոնք ատոմային ռումբով են սպառնում մարդկության գոյությունը:

Սովետական գրականությունը, որպես վերնաշենքային ակտիվ մի գործոն, կոչված է իր պատվավոր տեղը գրավելու այն պայքարում, որ մեր պարտիան մղում է կապիտալիզմի մնացուկները մարդկանց գիտակցության միջից արմատախիլ անելու համար:

Մեր գրականությունը դասակարգային է, իր տենդենցով պարտիական. նա աճել և առնացել է գաղափարական անհաշտ պայքար մղելով բուրժուական նացիոնալիզմի, կոսմոպոլիտիզմի, ազգային սահմանափակության և նիհիլիզմի ամեն տեսակի արտահայտությունների դեմ: Մեր գրականության համար խորթ ու օտար են եղել էսթետացող ֆորմալիզմն ու վուլգար նատուրալիզմը, որոնք գալիս էին շեղելու նրան իր զարգացման ճշմարիտ ուղուց: Սովետական գրականության համար ստեղծագործական ճիշտ ուղի է հանդիսացել սոցիալիստական ռեալիզմը, որը խարսխվում է մարքսիզմի-լենինիզմի փիլիսոփայական աշխարհայացքի վրա, հենվում է դիալեկտիկական և պատմական մատերիալիզմի իմացաբանության վրա:

Մեր գրականության զարգացման համար ուղենիշ գիծ են հանդիսանում սովետական ջերմ հայրենասիրությունը և պրոլետարական ինտերնացիոնալիզմը:

Գիտական կոմունիզմի մեծ հիմնադիրներ Մարքսն ու Էնգելսը, գծելով բանվոր դասակարգի պայքարի ուղիները՝ «կոմունիստական պարտիայի Մանիֆեստում» տվեցին «Պրոլետարենե՛ր բոլոր երկրների, միացե՛ք» լողունգը: Մարտական այս դրոշի տակ էր, որ համախմբվեցին և շարունակում են համախմբվել կապիտալիզմի դեմ պայքարի ելած աշխատավորներն ամբողջ աշխարհում, շահագործման լուծը թոթափելու և անդասակարգ, կոմունիստական հասարակակարգ կառուցելու նպատակով: Մարքսի և Էնգելսի կողմից հիմնադրված պրոլետարական ինտերնացիոնալիզմի գաղափարը ընկած է աշխարհի բոլոր երկրների կոմունիստական պարտիաների գործունեության հիմքում և հանդիսանում է նրանց դրոշը խաղաղության ու դեմոկրատիայի համար մղվող պայքարում:

Հակառակ բուրժուական նացիոնալիզմին, որը հանդիսանում է ազգերի միջև թշնամանք և ատելություն սերմանող մի գաղափարախոսություն, պրոլետարական ինտերնացիոնալիզմը ելնում է այն բանից, որ ամբողջ աշխարհի

բանվորների կենսական շահերը ընդհանուր են, անկախ նրանց ազգային պատկանելությունից և այլ կարգի տարբերություններից: Դրա համար էլ նրանք պետք է միանան, միասնաբար պայքարեն կապիտալի լծից ազատագրվելու նպատակով:

«Ընդհակներհ հետևողական և մինչև վերջը ռևոլյուցիոն ինտերնացիոնալիզմը պրոլետարական ինտերնացիոնալիզմի տիպար է բոլոր երկրների բանվորների համար»,¹ — գրում է ընկեր Ստալինը:

Սովետական գրականությունը իր բովանդակությամբ և նպատակասլացությամբ միշտ էլ հենվել է լենինյան-ստալինյան ուսմունքից բխող պրոլետարական ինտերնացիոնալիզմի վրա, որի գրողի տակ են համախմբված սովետական բազմազգ և բազմալեզու ժողովուրդները: Նրանց միասնական ջանքերով են կերտվում կոմունիստական նոր հասարակակարգն ու նրա ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական գրականությունը: Պրոլետարական ինտերնացիոնալիզմի գաղափարն է ընկած սովետական բազմազգ ժողովուրդների ստալինյան բարեկամության հիմքում: Ոչ ոք մեզ համար սարսափելի չէ, ոչ ներքին և ոչ էլ արտաքին թշնամին: Քանի կա այդ բարեկամությունը, քանի այն ապրում ու բարգավաճում է, մեր երկրի ժողովուրդները կլինեն ազատ ու անպարտ:

Որքան հզորանում, տնտեսապես ու կուլտուրապես ամրապնդվում է Սովետական Միությունը, այնքան ավելի ամրակուռ է դառնում նրանում միավորված ժողովուրդների բարեկամությունը:

Կոմունիզմի վիթխարի կառուցումների բովում է՝ և ավելի է թրծվում և կոփվում Սովետական Միության ժողովուրդների եղբայրական կապը, որը նրանց միացնում է տնտեսական, տեխնիկական, գիտական և արտադրական հազարավոր թելերով և միջոցներով:

Կուլբիշևյան, Ստալինգրադյան, Կախովկայի հիդրոէլեկտրակայանների կառուցումը, Գլխավոր Խորհրմենական, Վոլգա—Դոն, Հարավ—Ուկրաինական և Հյուսիս—Ղրիմյան ջրանցքների կառուցումը համաժողովրդական գործ է, որին մասնակցում են Սովետական Միության բոլոր ռեսպուբլիկաները: Ով որքան մեծանում են սովետական հասարակակարգի տնտեսական շինարարության շրջանակները, այնքան ավելի են ամրանում ու խորանում Միության բոլոր ժողովուրդների տնտեսական ու կուլտուրական կապերն ու համագործակցությունը, նրանց փոխադարձ օգնությունն ու օժանդակությունը կյանքի բոլոր ասպարեզներում, այնքան ավելի է ուժեղանում նրանց սերը դեպի իրենց սոցիալիստական հայրենիքը:

Սերը դեպի հայրենիքը՝ սովետական մարդկանց վսեմ զգացմունքների մեջ ամենանվիրականն է ու գեղեցիկը:

Մենք հիացմունքով ենք խոսում այն բանվորների, կոլխոզնիկների, գիտնականների ու ինժեներների մասին, որոնք մեր արդյունաբերության և գյուղատնտեսության առաջավորներն են, ջանք չեն խնայում բարձրացնելու իրենց աշխատանքի արտադրողականությունը և արտադրության մեջ նորանոր տեկորներ սահմանելով, անընդհատ ուժեղացնում են մեր հայրենիքի տնտեսական հզորությունը, հարստացնում են նրա կուլտուրան:

Մեր հայրենիքի պատմության հերոսամատյանում ոսկե տառերով գր-

¹ Ի. Վ. Ստալին, Հատ. 13, էջ 104:

վեցին այն մարդկանց անունները, որոնք զոհվեցին Հայրենական Մեծ պատերազմում, իրենց կրծքով պաշտպանելով սոցիալիստական Հայրենիքի ազատությունը, պատիվն ու անկախությունը:

Սոցիալիզմի երկրում փառքով են պսակվում այն հայրենասերները, որոնք շխնայելով իրենց ուժն ու եռանդը, անձնվիրաբար աշխատում են իրենց ընդունակությունների առավելագույն չափով, երկիրը հարստացնում նորանոր բարիքներով և արագացնում մեր առաջընթացը դեպի կոմունիզմ: Դրանք սոցիալիստական աշխատանքի հերոսներն են, նրանց թիվը օրավուր բազմապատկվում է, ընդգրկելով ժողովրդական լայն զանգվածներին: Սովետական հայրենասեր ժողովրդի ստեղծագործ և անձնուրաց աշխատանքով է կառուցվում կոմունիստական մեր տնտեսությունը: Սովետական հայրենասիրությունը դարձել է ակտիվ ու գործոն ուժ, որը սովետական մարդկանց մղում է դեպի նորանոր ստեղծագործությունների և սխրագործությունների՝ աշխատանքում, պայքարում նոր կյանքի կառուցման ճանապարհին:

Հայրենասիրությունը վեհ ու գեղեցիկ զգացմունք է, որը բարձր է անձնական շահերից ու բարոյական ամեն տեսակի նեղ հասկացողություններից: Հայրենասիրությունը ամենաառաքինի զգացմունքն է սովետական քաղաքացու համար:

Աշխարհում չկա ավելի ստոր և արգահատելի բան, քան հայրենադրժությունը: Հայրենիքի դավաճանին մեր ժողովուրդը անարգանքի սյունին է գամում: Հայրենադավր ոջիլից էլ ավելի ստոր էակ է, — ասել է մեծ բոլորին:

Հայրենասիրությունը այն սրբազան զգացմունքն է, որը ընկած է սովետական մարդկանց բարոյական հասկացողությունների հիմքում: Նա դարձել է մեր հասարակության բարոյական պատվանդանը, նա ուղղություն է տալիս մեր մարդկանց ողջ գործունեությանը: Այդ է պատճառը, որ սովետական գեղարվեստական գրականության մեջ ամենից ավելի սիրելի ու տպավորիչ են այն հերոսները, որոնց բնավորության մեջ ավելի ցայտուն գույներով են երևվան գալիս հայրենասիրական զգացմունքները: Օրինակ՝ Բ. Պուշկովի «Պատմը վաճառքիս կական մարդու մասին» գրքի հերոս՝ Մերեսևը, Ս. Բաբաևսկու «Ոսկե աստղի կավալերը» վեպի հերոս՝ Ս. Տուտարինովը, Վ. Աժաևի «Մոսկվայից հեռու» վեպի հերոսներ՝ Բատմանովը, Բերիձեն, Կովչովը, Պավլենկոյի «Երջանկություն» վեպի հերոս՝ Վորոպաևը, Ն. Զարյանի «Հացավան» վեպի հերոսներ՝ Լամբարյանը, Վասակ Զոբանյանը, Հասմիկ Զուրաբյանը, Սերո Խանզադյանի «Մեր գնդի մարդիկ» վեպի հերոսներ՝ Աշոտ Մյունեցյանը, Իվանը, Կարպենկոն, Բայբեկը, Շալիկոն, Մամեդը և այլն:

Հայրենասիրությունը դարձել է սոցիալիստական հասարակակարգի, նրա գիտության, արվեստի զարգացման շարժիչ, առաջմղիչ ուժը, իսկ վառ հայրենասերը դարձել է սովետական գրականության կենտրոնական կերպարը, նրա գլխավոր հերոսը իր նոր՝ սովետական ազգային խառնվածքով:

* * *

Նախասովետական, բուրժուական ազգերի մեջ լենինն ու Ստալինը տեսնում էին երկու ազգ, երկու ազգային կուլտուրա. հետևաբար և երկու տիպի հայրենասիրություն: Վ. Ի. Լենինը իր «Քննադատական դիտողություններ ազգային հարցի վերաբերյալ» հոդվածում 1913 թվին գրում էր. «Կա երկու ազգ ժամանակակից յուրաքանչյուր ազգի մեջ, — կասենք մենք բոլոր նացիո-

նալ-սոցիալներին: Կա երկու ազգային կուլտուրա յուրաքանչյուր ազգային կուլտուրայի մեջ: Կա Պուրիշկևիչների, Գուշկովների և Ստրովենների վեիկոռուսական կուլտուրա, — բայց և կա վեիկոռուսական կուլտուրա, որը բնորոշվում է Չերնիշևսկու և Պլեխանովի անուններով¹: Ընկեր Ստալինը զարգացնելով Վ. Ի. Լենինի այս միտքը, գրել է. «Բոլոր երկրների ռևոլուցիոն բանվորների ղեկավարները ազահությունամբ ուսումնասիրում են Ռուսաստանի բանվոր դասակարգի շատ ուսանելի պատմությունը, նրա անցյալը, Ռուսաստանի անցյալը, գիտենալով, որ բացի ռեակցիոն Ռուսաստանից, գոյություն է ունեցել նաև ռևոլուցիոն Ռուսաստան, Ռադիշևների և Չերնիշևսկիների, Ժելյաբովների և Ուլյանովների, Խալտուրինների և Ալեքսեևների Ռուսաստան: Այս բոլորը ռուս բանվորների սիրտը տոգորում է (չի կարող չտոգորել) ռևոլուցիոն ազգային հպարտության զգացմունքով, որն ընդունակ է լեռներ շարժելու, ընդունակ է հրաշքներ գործելու»²:

Լենինն իր «Վեիկոռուսների ազգային հպարտության մասին» հոդվածում գրում է.

... «Խո րթ է արդյոք մեզ համար, վեիկոռուսական գիտակից պրոլետարներիս համար, ազգային հպարտության զգացումը: Իհարկե, ոչ: Մենք սիրում ենք մեր լեզուն ու մեր հայրենիքը, մենք ամենից ավելի աշխատում ենք այն բանի վրա, որ նրա աշխատավոր մասսաներին, (այսինքն՝ նրա բնակչության ¹/10) բարձրացնենք մինչև դեմոկրատների և սոցիալիստների գիտակից կյանքը...

... Մենք հպարտանում ենք նրանով, որ այդ բռնությունները մեր միջավայրից, վեիկոռուսների միջավայրից, հակահարված են առաջ բերել, որ այդ միջավայրն առաջ է քաշել Ռադիշևին, դեկաբրիստներին, 70-ական թվականների ռազնոչին-ռևոլուցիոններին, որ վեիկոռուսական բանվոր դասակարգը 1905 թվականին ստեղծեց մասսաների հզոր ռևոլուցիոն պարտիա, որ վեիկոռուսական մուժիկը սկսեց միաժամանակ դեմոկրատ դառնալ, սկսեց տապալել տերտերին ու կալվածատիրոջը»:

Ինչպես տեսնում ենք՝ Լենինի մոտ վեիկոռուսական պատրիոտիզմը խարսխվում է վեիկոռուս բանվոր դասակարգի և գյուղացիության սոցիալիստական գիտակցության վրա: Նա, ինչպես ընկեր Ստալինն է ասում, նախ և առաջ «ռևոլուցիոն ազգային հպարտություն» է:

Նվ արդարև հայրենասիրության, ժողովուրդների բարեկամության և հումանիզմի գաղափարը կարմիր թելի պես անցնում է ռուսական առաջադեմ գրականության միջով՝ սկսած «Ասք Բգորի ճակատամարտի մասին» երկից մինչև Ռադիշևի, Պուշկինի, Տոլստոյի, Գորկու, Մայակովսկու ստեղծագործությունները:

Հայրենասիրությունը հիմնական շարժիչ ուժն է եղել հայ գրականության սկզբնավորումից մինչև մեր օրերը: Սերը դեպի հայրենիքը, դեպի նրա ազատությունը եղել է մեր ժողովրդի մշտական պաթոսը: Հենց հայրենիքի սերն է, որ պահպանել է մեր ազատասեր ժողովրդի ոգին դարերի ընթացքում, նրան դուրս է քերել պատմության արհավիրքների միջով:

Հայրենիքի գաղափարը, սակայն, նախասովետական շրջանի հայ գրող-

¹ Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 20, էջ 20:

² Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 13, էջ 28:

³ Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 21, էջ 118:

ների մոտ գլխավորապես նույնացվել է ծննդավայրի հետ (օրինակ Դոդոխյանի «Ծիծեռնակում» հայրենիքը «ծնած տեղ Աշտարակն» է), աշխարհագրական միջավայրի հասկացողության հետ («Կռունկ, մեր աշխարհն խաբրիկ մը շունիս»), ընդհանրապես նա չի բարձրացել սեփական ազգային հասկացողության սահմաններից:

Բուրժուական նացիոնալիստները նույնպես բարբաջել են հայրենասիրության մասին: Սակայն նրանց «հայրենասիրությունը» երբեք կապված չի եղել ժողովրդի շահերի հետ, չի արտահայտել նրա իղձերն ու ձգտումները: Բուրժուական նացիոնալիստների համար «հայրենասիրությունը» ծառայել է զուտ իմպերիալիստական բուրժուազիային, նրա զավթողական պլանների իրագործմանը:

Հայ ժողովրդի ուխերիմ թշնամիների՝ դաշնականների համար հայրենիքը միշտ էլ եղել է վաճառքի առարկա, որի հետևանքով էլ հայ ժողովուրդը ոտնատակ է եղել ենիշերական Թյուրքիայի կրոնկի տակ և զոհ է դարձել գերմանական և անգլո-ամերիկյան իմպերիալիստների գաղութարարական քաղաքականությանը:

Միայն Հոկտեմբերյան ռեուլուցիայից հետո, սովետական սոցիալիստական կարգերի հաղթանակի պայմաններում էր, որ հայրենասիրության զգացումն ու գաղափարն իր խոր, լիարյուն արտահայտությունը գտավ մեր ժողովրդի գիտակցության և նրա գրականության մեջ:

Հայրենասիրությունը իր նոր, ավելի բարձր որակն ընդունեց սոցիալիստական ազգերի գիտակցության մեջ, ուր նա ազգային անձուկ շրջանակներից վերաճելով, բարձրացավ և ձուլվեց կոմունիստական մեծ գաղափարների հետ, դառնալով նրա կարևոր մասնիկը, իր մեջ առնելով ժողովուրդների բանկամության և եղբայրության ինտերնացիոնալ հասկացողությունը:

Այսպիսով, սովետական հայրենասիրությունը — դա նոր, ավելի բարձր տիպի հայրենասիրություն է, որն իր նմանը չի ունեցել նախընթաց պատմության մեջ: «Սովետական հայրենասիրության ուժն այն է, — ասում է ընկեր Ստալինը, — որ նրա հիմքը ո՛չ թե ռասայական կամ նացիոնալիստական նախապաշարմունքներն են, այլ ժողովրդի խորին նվիրվածությունն ու հավատարմությունը իր Սովետական Հայրենիքին, մեր երկրի բոլոր ազգերի աշխատավորության եղբայրական համագործակցությունը: Սովետական հայրենասիրության մեջ ներդաշնակորեն զուգակցվում են ժողովուրդների ազգային տրադիցիաները և Սովետական Միության բոլոր աշխատավորների ընդհանուր կենսական շահերը: Սովետական հայրենասիրությունը մեր երկրի բոլոր ազգերին ու ժողովուրդներին չի բաժանում, այլ ընդհակառակը՝ համախմբում է եղբայրական միասնական ընտանիքի մեջ»:¹

Հայրենասիրության ստալինյան ըմբռնումը մեղ սովորեցնում է, որ սեփական ազգային արժանապատվության զգացմունքները ոչ թե պիտի հակադրել մյուս ազգերի ազգային արժանապատվությանը, նրանցից վեր դասելու նպատակով, այլ յուր ազգային արժանապատվությունը հետևողականորեն ներդաշնակել սովետական մյուս ազգերի ազգային արժանապատվության հետ, փոխադարձ սիրո և հարգանքի հիման վրա: Միայն այս կարգի հայրենասիրությունն է, որ ոչ թե հակադրում, այլ համագործում է ազգերի եղբայրու-

¹ Ի. Վ. Ստալին, Սովետական Միության Հայրենական մեծ պատերազմի մասին, էջ 192:

թյան և իրավունքների հավասարության սկզբունքները, ծառայեցնելով դրանք կոմունիստական նոր հասարակարգը միասնաբար կառուցելու համերաշխ ձգտումներին:

Կապիտալիզմը բաժանում, օտարացնում և թշնամացնում է ազգերին, իսկ սոցիալիզմը միացնում, եղբայրացնում ու բարեկամացնում է նրանց:

Բազմազգ սովետական պետության պայմաններում նոր սոցիալիստական ազգերի կազմակերպման պրոցեսում ավելի ու ավելի են կորչում ազգերի միջև եղած ներամիոփոթյան գծերը, այդ ազգերի մեջ զարգանում են այնպիսի հատկանիշներ, որոնք մերձեցնում, ներդաշնակում են նրանց շահերը. նոր գծեր, որոնք նրանց մեջ դաստիարակում է Լենինի-Ստալինի պարտիան, սովետական իշխանությունը:

Ամերիկյան իմպերիալիզմի վարձկան «տեսաբանները» հրապարակ են քաշել կոսմոպոլիտիզմի ռեակցիոն թեորիան, որով փորձում են ժխտել ժողովուրդների դարավոր սրբությունը հանդիսացող Հայրենիքի գաղափարը: Ամերիկյան իմպերիալիզմի դավադիր գործակալները փորձում են մարդկանց մեջ սերմանել «որտեղ շահ, այնտեղ հայրենիք» ռեակցիոն լոզունգը, սակայն Ուոլ-Ստրիտի այդ վարձկաններին չի հաջողվի մոլորեցնել ժողովուրդներին. նրանց մեջ մեռցնել այն վսեմ զգացումը, որը կապված է ժողովրդի և նրա հայրենիքի հետ: Հայրենասիրական զգացումը,— ասում է Լենինը,— ժողովրդի մեջ զարգացել է դարերի ընթացքում. նա իր մեջ պարունակում է նախ և առաջ ազգի մեծամասնության, նրա աշխատավորական լայն զանգվածների շահերը: 'Իրա համար էլ նա հանդիսանում է պրոլետարիատի դասակարգային կռվի բարոյական հզոր ֆակտորը:

* * *

Ընկեր Ստալինն իր «Ազգային հարցը և Լենինիզմը» հանձարեղ աշխատության մեջ խոսում է այն արմատական տարբերության մասին, որ գոյություն ունի արգի բուրժուական ազգերի և նոր, սոցիալիստական ազգերի միջև: «Այդ նոր ազգերը,— ասում է ընկեր Ստալինը,— ծագեցին և զարգացան հին, բուրժուական ազգերի բազայի վրա՝ կապիտալիզմի լիկվիդացման հետևանքով,— նրանց սոցիալիզմի ոգով արմատապես վերափոխելու միջոցով»¹:

Սոցիալիզմի ծնունդով առաջացան նաև նոր սոցիալիստական ազգերը, որոնք իրենց դասակարգային էությունով ավելի կուռ են, քան բուրժուական որևիցե ազգ, որովհետև սոցիալիստական ազգերը ազատ են դասակարգային ներքին անհաշտելի հակասություններից և հանդիսանում են ավելի համաժողովրդական, քան որևիցե բուրժուական ազգ:

Բուրժուական ազգերի դասակարգային բնույթից բխում է նրանց հոգևոր կերպարանքը, նրանց «բարոյական» դեմքը:

Իր այս աշխատության մեջ ընկեր Ստալինը այն միտքն է զարգացնում, որ ազգերի միջև անվստահություն սերմանողը շահագործողներն են, որ վերջիններիս վերացմամբ կվերանան նաև կապիտալիզմին հատուկ երևույթները, ինչպես օրինակ՝ ազգային անտագոնիզմը: Այս բանի լավագույն ապացույցը տվին նոր սովետական ազգերը, որոնք ձևավորվեցին և զարգացան Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլուցիայից հետո, Ռուսաստանում կապի-

¹ Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 11, էջ 386:

տալիզմի տապալումից հետո, սոցիալիստական կարգերի հաստատման շնորհիվ:

«Բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության դաշինք ազգի ներսում՝ կապիտալիզմի մնացորդները լիկվիդացնելու համար հանուն սոցիալիզմի հաղթական շինարարության, ազգային ճնշման մնացորդների ոչնչացում հանուն ազգերի և ազգային փոքրամասնությունների իրավահավասարության ու ազատ զարգացման, նացիոնալիզմի մնացորդների ոչնչացում հանուն ժողովուրդների միջև բարեկամություն ստեղծելու և ինտերնացիոնալիզմ հաստատելու, միասնական ճակատ բոլոր ճնշված ու ոչ-լիիրավ ազգերի հետ զավթումների ու զավթողական պատերազմների դեմ մղվող պայքարում, իմպերիալիզմի դեմ մղվող պայքարում,— այս է այդ ազգերի հոգևոր ու սոցիալ-քաղաքական կերպարանքը»¹:

Ինչպես ռուս ազգի, այնպես էլ Սովետական Միության մյուս ազգությունների նախառևույցիոն կուլտուրան ու գրականությունը տրոհված է եղել բուրժուական-ռեակցիոն և ժողովրդական-դեմոկրատական տարրերի: Սովետական՝ ձևով ազգային և բովանդակությամբ սոցիալիստական բոլոր ազգային գրականությունները մերժելով առաջին տեսակի ազգային «կուլտուրական» ժառանգությունը, շհրաժարվեցին սակայն ժողովրդական-ռեմոկրատական առաջադեմ, կուլտուրական ժառանգությունից: Ընդհակառակը՝ ժամանակակից սոցիալիստական ազգերի արվեստն ու գրականությունը իրենց մեջ առան ազգային կլասիկ ժառանգության լավագույն տարրերն ու տրադիցիաները և այդ ամենը քննադատաբար վերամշակելով, նրանց քաղաքի վրա ստեղծեցին ձևով ազգային և բովանդակությամբ սոցիալիստական նոր արվեստ և գրականություն:

Սովետական բազմալեզու գրականությունն իր ձևով ազգային է, բովանդակությամբ սոցիալիստական: Սա նշանակում է, որ նրան խորթ և օտար են ազգային սահմանափակությունն ու ներամփոփությունը:

Սովետական Միության ազգային գրականությունների խնդիրներն իրենց էությամբ չեն տարբերվում այն ընդհանուր հարցերից, որոնցով ապրում, սընվում և զարգանում է ինչպես ռուսական սովետական, նույնպես համամիութենական ողջ գրականությունը: Ազգային ամեն մի գրականություն առանձին վերցրած համամիութենական սովետական ողջ գրականության մի օղակն է, որն ընդհանրապես ապրում է սովետական բոլոր ժողովուրդների շահերով, ՍՍՄԽ-ի շահերով: Սովետական ազգային ամեն մի գրականությունը կոչված է արտացոլելու մեր հայրենիքի մեծությունն ու հզորությունը, արտացոլելու ժողովուրդների ստալինյան բարեկամությունը, սովետական բոցաշունչ հայրենասիրությունը:

«Սովետական հայրենասիրությունը, սովետական մարդկանց ազգային հպարտությունը ակտիվ, ներգործոն զգացմունք է, ուժեղ զգացմունք հենց նրանով, որ նրան սնուցող արմատները կենդանի, իրական կյանքի մեջ են: Դա սերն է դեպի այն հայրենիքը, որը մենք վերափոխել ենք մեր ձեռքով» («Պրավդա»):

Մեր սովետական գրականությունը թե՛ իր թեմատիկայով և թե՛ իր պերսոնաժներով, հերոսների կազմով ու նրանց բարոյական ու իդեալական կերպա-

¹ Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 11, էջ 385—386:

րանքով ինտերնացիոնալիստական է, քանի որ նա արտացոլում է այն հասարակարգը և նրա մարդկանց միջև եղած հարաբերությունները, որոնց հիմքում ընկած է ազգերի և ժողովուրդների բարեկամության և համերաշխության ինտերնացիոնալ սկզբունքը, կոմունիստական հումանիզմի սկզբունքը, որտեղ ազգային նեղ ու ասոմանափակ զգացմունքներն ու հասկացողությունները փոխարինվել են համամարդկային նոր բարոյականությամբ, զգացմունքներով ու հասկացողություններով:

«Մենք այսօր այն չենք, ինչ որ երեկ էինք և վաղը այն չենք լինի, ինչ որ այսօր ենք: Մենք արդեն այն ուսաները չենք, ինչ որ մինչև 1917 թվականին էինք, և Ռուսիան արդեն այն չէ, և մեր բնավորությունն էլ այն չէ: Մենք փոխվել և աճել ենք այն մեծագույն վերափոխությունների հետ միասին, որոնք արմատապես փոխեցին մեր երկրի դեմքը»: (Ժդանով):

Ընկեր Ժդանովի այս խոսքերը հավասարապես վերաբերում են սովետական մյուս ազգերին, ինչպես նաև մեզ, հայերիս: Մենք այլևս նախահոկտեմբերյան հայերը չենք, մենք ևս փոխվել ենք, դարձել ենք սոցիալիստական նոր ազգ: «Ոչ ոք չի կարող ժխտել, — ասում է ընկեր Ստալինը, — որ Սովետական Միության այժմյան սոցիալիստական ազգերը — ռուսական, ուկրաինական, բելոռուսական, թաթարական, բաշկիրական, ուզբեկական, ղազախական, ադրբեջանական, վրացական, հայկական և մյուս ազգերը — արմատապես տարբերվում են հին Ռուսաստանի համապատասխան հին, բուրժուական ազգերից ինչպես իրենց դասակարգային կազմով և հոգևոր կերպարանքով, այնպես էլ իրենց սոցիալ-քաղաքական շահերով ու ձգտումներով»:¹

Այժմ շատ օրինաչափ երևույթ է, երբ սովետական ռուսական գրականության լավագույն գործերում մենք հանդիպում ենք մեծ քանակությամբ ոչ ռուս ազգին պատկանող հերոսների, ինչպես Ա. Ֆադեևի «Երիտասարդ գվարդիա»-յում Ժորա Հարությունյանը, Մայա Պելսելվանովան, Վ. Աժանի «Մոսկվայից հեռու» վեպում Գ. Բերիձեն, Բ. Պոլեոյի «Պատմվածք իսկական մարդու մասին» գրքում մայոր Բուռնազյանը, Ի. Կավերինի «Երկու կապիտան» վեպում բժիշկ Հովհաննիսյանը, Ի. էրենբուրգի «Փոթորիկ» վեպում Ավանեսովը և ուրիշներ: Ընդորոմ պետք է նշել, որ վերոհիշյալ և այլ բազմաթիվ գրքերում նկարագրված ոչ ռուս հերոսները հանդես չեն գալիս որպես «ազգային փոքրամասնություններ»՝ ազգային նեղ հասկացողություններով, այլ սրանք հավասարների շարքում աչքի ընկնող հերոսներ են, սովետական մարդկանց ամենափայլուն ներկայացուցիչներ, սովետական անձնվեր հայրենասերներ:

Եթե սովետական ռուս գրականության լավագույն գործերում աստիճանաբար շատանում են հայ և սովետական մյուս ազգությունների ներկայացուցիչները, ապա սովետահայ գրականության, հատկապես ետպատերազմյան արձակի մեջ մեծ չափերով երևաց սովետական հասարակարգի և հայրենական պատերազմի գլխավոր հերոս ռուս մարդն իր հոգեկան հարուստ գծերով և նրա հետ միասին սովետական եղբայրական ժողովուրդների բազմաթիվ ներկայացուցիչներ:

Սովետահայ բանաստեղծներն ու գուսանները սլոեզիայի բոլոր ժանրերով

¹ Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 11, էջ 386:

և արտահայտչական եղանակներով գովերգել են մեր հայրենիքի փառքն ու վսեմությունը և նրա խորհրդանշը հանդիսացող մեծ լենինի ու Ստալինի կերպարները։ Սովետահայ բանաստեղծները Ստալինի գեղարվեստական պատկերի մեջ են տեսնում մեր հայրենիքի ինդուստրիալ-կոլխոզային կնրպարանքը, նրա պետական ու քաղաքական հզորությունն ու առավելությունները, քաղաքացիական և Հայրենական պատերազմներում մեր ժողովրդի տարած հաղթանակների աղբյուրը, խաղաղության և անվտանգության համար մղվող պայքարի ոգեշնչողը, կոմունիստական հասարակակարգի կառուցման մեծ ճարտարապետը։

* * *

Հայրենասիրական վառ բանաստեղծություններ և արձակ գործեր է տվել մեր դրականության տաղանդավոր ներկայացուցիչ Ն. Զարյանը։

Նրա գրչին են պատկանում հռչակավոր «Ստալին» բանաստեղծությունը, որը մեծ ընդունելություն գտավ ընթերցող լայն մասսաների կողմից։ Ն. Զարյանի այդ բանաստեղծությունը հայրենասիրական բոցավառ խոսք է՝ հայ ժողովրդի մեծ բարեկամ ու ազատարար հայր Ստալինին։ Դա երախտապարտ ժողովրդի բանաստեղծի ներբողն է մեծ ուսուցչին և առաջնորդին։

Բացի այդ գործից՝ Ն. Զարյանը բազմաթիվ այլ ոգեշունչ բանաստեղծություններ է նվիրել մեծ Ստալինին, ինչպես օրինակ «Ողջունչ Առաջնորդին», «Վերածնունդ», «Կոմունիզմի զորավարը», «Հսեք, դարեր», «Ազատություն զորավարին» և վերջապես նրա «Դյուցազնադիրք» մեծ պոեմը, որտեղ էպիկական լայն կտավի վրա պատկերված է առաջնորդի զորավարական հանճարը քաղաքացիական կռիվների տարիներին՝ Ցարիցինի պաշտպանության ժամանակ։

Ցարիցինի և Ստալինզորադյան դյուցազնական պաշտպանությունը բանաստեղծի մոտ սիմվոլացված է որպես մեր հայրենիքի ռազմական և քաղաքական ուժը մարմնավորող համաշխարհային պատմական ակտ։

Ինչպես Ն. Զարյանի, այնպես էլ մեր մյուս բանաստեղծների մոտ Ստալինի կերպարը երգվել է որպես մեր հայրենիքի ու նրա առաջընթացի սիմվոլ, ամբողջ աշխարհում կոմունիզմի հաղթարշավի վառ փարոսը։

Սովետական Միության տարբեր ազգությունների պատկանող մարդկանց Ստալինյան բարեկամության գաղափարները իրենց գեղարվեստական լայն մարմնավորումը գտան Հրաչյա Քոչարի Հայրենական պատերազմի տարիներին գրած պատմվածքներում, Մ. Արաղու, Հմ. Սիրասի, Հ. Մկրտչյանի, Ղեվոնդ Կոմունու արձակ գործերում, Ալավնու «Սակրավոր Սաքոն» պոեմում, Գ. Բորյանի «Բարձունքներում» պիեսում և հատկապես Ս. Խանզադյանի «Մեր զնդի մարդիկ» վեպում և այլն։

Օրինակ Հր. Քոչարի «Բարեկամություն» պատմվածքի հերոս ուկրաինացի պարտիզանը այսպես է դատում. «... ինձ ասում են, թե քո շրջանն արդեն ազատագրվել է, պիտի մնաս շրջանում աշխատելու, բավական է, ամեն պարտիզան, ասում են, պիտի իր շրջանում գործի... Ձէ, եղբայր, ներեցեք, ես փոքրիկ մի շրջանի լինակիչ չեմ, այլ Ուկրաինական Սովետական Սոցիալիստական ռեսպուբլիկայի քաղաքացի, ոչ էլ այդպես, ես զավակն եմ Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միության, քանի ազատ չէ Միությունն ամ-

բողջովին, ինչու պիտի վտանգի մեջ լինեն ուրիշները, իսկ ես թիկունքում...»:

Հայրենիքի և հայրենասիրության լայնախոհ գաղափարները կարմիր թելի պես անցնում են Հր. Քոչարի «Սրբազան ուխտ» գրքում տպագրված մի շարք գործերում:

«Կյանքի հաղթանակը» պատմվածքի հերոս աղրբեջանցի Յակուբի համար հայրենիքն այլևս այն փոքրիկ գյուղը կամ ռայոնը չէ, որտեղ նա ծնվել և մեծացել է. նրա համար Հայրենիքը շատ մեծ է, ունի հազարավոր քաղաքներ և գյուղեր: Նա պատերազմի տարիներին, ռազմաճակատում զգաց, որ այլևս այն չէ: «Նա առնականացել էր փորձությունների մեջ, հասել փառքի, շրջապատված էր հարյուրավոր բարեկամներով, որոնք պատրաստ էին իրենց կյանքը զոհաբերել նրա համար: Եվ լեյտենանտ Չալկան, և Պավել Կիսելյովը, և Յակով Բոգզանովը Յակուբի համար փոխարինել էին այն մարդկանց, որոնց հետ մեծացել էր մի հարկի տակ: Յակուբն իր մեջ զգում էր բոլոր հրամանատարների ու շարքայիների ուժը, բոլոր վետերանների և նոր ռազմիկների ուժը, իր ամբողջ բանակի ուժը, և իր հոգում շնորհակալ էր մարդկանցից ու հայրենիքից, շնորհակալ էր կյանքից, որ պահում էր նրան իր ձեռքերի վրա բարձր ու բարձր և հողից, որ անխախտ կանգնած էր նրա ոտքերի տակ, այն հողից, որի վրայով քայլում էր նա՝ նրա ճշմարիտ տիրոջ ինքնավստահությամբ»: Եվ վերջապես այս միտքը ավելի կոնկրետ արտահայտել է Քոչարի «Խոհեր և երազանքներ»-ի հերոս հայ սերժանտը, որը պատերազմում աճել է հոգեպես, լայնացել է նրա մտահորիզոնը և աշխարհաճանաչողությունը: Պատերազմում նա ձեռք է բերել հարյուրավոր նոր նղբայրներ, ինչպիսին իր րնկեր Վասիլն է: «Հենց այդ էլ իմ հարստությունն է, որով ես պարծենում եմ, որը տվեց ինձ պատերազմը»:

Սովետական ջերմ հայրենասիրությունն իր վառ արտացոլումն է գտել Արազու «Հայրենի հող» փոքրիկ պատմվածքում, որը լույս տեսավ Հայրենական մեծ պատերազմի հենց առաջին օրերին: Արազու հերոսն իր հետ ռազմաճակատ է տարել մի պտղունց հայրենի հող և երդվել է արյան գնով պաշտպանել այն: Նա այդ հողի մեջ չի տեսնում միայն իր ծննդավայրը կամ Սովետական Հայաստանը, այլ ամբողջ Սովետական մեծ Միությունը, «որտեղ առաջին անգամ բացվել է մարդկային երջանկության՝ կոմունիզմի լույսը»:

Սովետական գրականության կերպարների մեջ արմատավորվում են բոլոր սովետական ժողովուրդների ազգային խառնվածքի լավագույն գծերը, ձևակերպվում է սովետական ազգային նոր խառնվածք, որի ներկայացուցիչները երևացել են սովետահայ բազմաթիվ գեղարվեստական երկերում:

Սովետական ազգային նոր խառնվածքի համար խորթ և անընդունելի են ազգային նեղ հասկացողություններն ու անձուկ շահերը, նրա համար Հայրենիքի հասկացողությունը ընդարձակ է ու մեծ, ինչպես լայնարձակ ու մեծ է Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միությունը, ինչպես մեծ ու համայնապարփակ են լենինիզմի ինտերնացիոնալ գաղափարները, որոնց ամուր հիմքերի վրա զարգանում է սոցիալիստական ռեալիզմի նոր գրականությունն ու նրա գլխավոր հերոսը՝ սովետական մարգը:

«Յուրաքանչյուր գրական երկ, որի մեջ տաղանդավոր կերպով լուսաբանվում է սոցիալիստական հայրենիքի սիրո թեման, մեր սրտերում հայրենասի-

րական ուժեղ զգացմունքներ է առաջացնում»,— դրում է մեր պարտիայի մարտական օրգան «Պրավդան»¹

Դժբախտաբար մեր գրականություն մեջ զեռևս պատահում են շեղումներ և հեռացումներ դեպի անցյալը, դեպի նացիոնալիստական ճահճուտը։ Այդպես պատահեց ուկրաինական բանաստեղծ Վ. Սոսյուրայի հետ, որն իր բազմաթիվ հաջող գործերի կողքին հրատարակել է «Սիրիւր Ուկրաինան» գաղափարապես արատավոր բանաստեղծությունը, որտեղ զովերգվում է ոչ թե մեզ համար անհունորեն թանկ և սիրելի Սովետական Ուկրաինան իր վիթխարի գործարաններով, Դնեպրոգէտով և մետալուրգիական ու մեքենաշինական դիզանտներով, երջանիկ կյանքի հասած կոլխոզնիկներով ու սոցիալիստական առաջավոր կուլտուրայով, այլ զովերգվում է հին Ուկրաինան, որ տնքացել է շահագործողների լծի տակ։

Վ. Սոսյուրային հուզել է, ինչպես «Պրավդան» է ասում, վաղեմի Ուկրաինան իր ծաղիկներով, զանդրահեր ուռենիներով, թռչնիկներով, Դնեպրի ալիքներով։ Մինչդեռ ամենից առաջ նա պետք է երգեր մեր մեծ ստեղծագործ ժողովրդի աշխատանքը, փառաբաներ այն նորը, որ բերեցին Ուկրաինային սովետական կարգերը։

Վ. Սոսյուրայի «Սիրիւր Ուկրաինան» նացիոնալիստական տենդենցով գրված բանաստեղծություն հանդես գալը ցույց է տալիս, որ մեր գրողներից ոմանք դեռևս իրենց ուսերից չեն թոթափել անցյալից եկող նացիոնալիստական բեռը, որը հանդես է գալիս գեղարվեստական ձևով, հալընեփքի աբստրակտ ու ապոլիտիկ դովերգման ճանապարհով։

Կապիտալիզմի մնացուկներն իրենց ամենից շատ զգացնել են տալիս ազգային հարցի առպարեզում, հնարավորություն ունենալով բողարկվելու ազգային ձևով, անցյալից եկող ազգային առանձնահատկություններով, որը զրսևորվում է հնի իդեալականացման, սեփական ազգային հատկանիշները գերազնահատելու և ուրիշներից վեր դասվելու տենդենցներով։ Այս տեսանկյունով երբ նայում ենք սովետահայ արդի պոեզիային, ապա նույնանման մոմենտներ նկատելի են նաև մեզ մոտ։ Ըներ որոշ պոետներն էլ Հայաստանը գովերգում են ոչ իր այսօրվա սոցիալիստական հատկանիշներով, այլ հին ձևով, այնպես, ինչպես Հայաստանը երգվել է նախասովետական հայ երգիչների թախծոտ քնարով։ Որինակ՝ տրամադրությամբ ինչո՞վ են տարբեր անցյալ դարի 90-ական թվականների բանաստեղծ Հովհ. Հովհաննիսյանի

Արագն եկավ լափին տալով,

Ժեռ քարերին, ափին տալով.

Որտե՞ղ թաղեմ ես իմ դարդը

Չոր դյուխս տափին տալով...

Բանաստեղծությունը՝ մեր նոր, սովետական բանաստեղծ Հովհ. Շիրազի

Իսկ դու ուսկի՞ց կիջնես, Արադ,

Որ պղտոր ես նորից գալիս,

Ո՞ւմ սրտից ես գալիս, Արադ,

Դեռ ո՞ւմ աչքն է քեզնով լայիս...

Բանաստեղծությունից։

¹ «Պրավդա», 1951 թ. հունիսի 2:

Հովհաննես Շիրազի բանաստեղծությունների նոր ժողովածուն «Գիրք խաղաղության և սիրո» իր մեջ պարունակում է բազմաթիվ գեղեցիկ գործեր, որոնք զբաղված են իսկական սովետական հայրենասերի զրչով (օրինակ՝ «Խաղաղության բերքը», «Մեծ Ստալինին», «Խաղաղություն» բանաստեղծությունները. «Մեր գյուղերի անունները», «Իմ ընկեր լորիկը» պոեմները և այլն)։ Սակայն պետք է ասել, որ շիրազի կողքին տեղ են գտել, օրինակ՝ «Արարատ», «Կարոտ», «Որպես վշտի օրերն հայոց» բանաստեղծությունները, որոնք թե իրենց տրամադրությամբ և թե գաղափարական սլացքով երբեք էլ չեն արտահայտում սոցիալիստական վեհ գաղափարներով տոգորված, կոմունիզմի մեծ շինարարության առողջ ու լավատես հեռանկարներով ոգևորված սովետական Հայաստանի աշխատավորների, նամանավանդ երիտասարդության հույզերն ու տրամադրությունները։ Շիրազն իր այդ երգերով ո՛չ թե ոգևորում է այն բանվորներին ու գիտնականներին, որոնց միտքը օր ու գիշեր զբաղված է կոմունիզմի մեծ շինարարության հարցերով, այլ, ընդհակառակը, այդ ապուլիտիկ երգերով մեր մարդկանց միտքն ու ուշադրությունը շեղում է դեպի թախծոտ անցյալը և նրանց սրտում բորբոքում ազգային կորստի և դառնության վիշտը, կապված Արազի, Անիի և Արարատի վիճակի հետ։ Դա մի վատառողջ տրամադրություն է, որի տակ քողարկված է նացիոնալիզմը, որի դեմ պայքարողների առաջին շարքերում պետք է լինեն ինքը Շիրազը, որպես սովետական գաղափարական ճակատամասի զինվոր-բանաստեղծ։ Շիրազը պետք է խորապես գիտակցի «Պրավդայի» այն խոսքերը, որ «Գրողների պարտականությունն է՝ անհաշտ պայքար մղել նացիոնալիզմի ամեն տեսակի և գույնի դրսևորումների դեմ, անխոնջ կերպով պրոպագանդել սովետական հայրենասիրությունը, պրոլետարական ինտերնացիոնալիզմի ազնիվ գաղափարները, իրենց երկերում զովերգել կոմունիզմ կառուցող մեր մեծ Հայրենիքի հերոսական գործերը»։

Հայրենիքի ապուլիտիկ գովերգման նմուշների կարելի է հանդիպել նաև Սարմենի, Ս. Տարոնցու, Գ. Սարյանի, Աշոտ Գրաշու մոտ։ Այսօր ո՞վ կարող է հրապուրվել այն ընդհանուր խոսքերով, որ նվիրում է հայրենիքին Աշոտ Գրաշին իր «Հայրենիք» բանաստեղծության մեջ։

«Պետք է պարզ ասել, որ Աշոտ Գրաշու մոտ իդեալական հագեցված «Ես երգում եմ», «Հանդիպում» և բազմաթիվ նման գործերի կողքին երևան են գալիս «Սովետական Հայաստան» և այս բնույթի գործեր, որ Հայաստանը «օտարության անապատում որդուդ այրված շուրթերին Արարատի աստեղային անմեռ ձյունն է»։ Բայց ո՞ւր է ինդուստրիալ Հայաստանը, կոմունիզմի գիգանտների կառուցման մասնակից Հայաստանը, սոցիալիստական գաղափարներով աշխարհասփյուռ զավակներին ժողովող Հայաստանը, որն ավելի գրավիչ է, քան «Հազարան հեքիաթական թռչունը», որ բանաստեղծի մտապատկերում դեռևս «տիեզերքի մի բուն հոգն» է։

Աշոտ Գրաշին սովետական ընթերցողին տվել է բազմաթիվ գեղեցիկ գործեր, որոնք թարգմանվել են և ռուսերեն և եղբայրական մյուս ժողովուրդների լեզուներով։ Նա իր երգերի մեջ չի սահմանափակվում «Արարատով» կամ «Զանգուով»։ Նրա թեմատիկան բազմազան է. նա երգել է «Հյուսիսին», «Կրեմլյան եղևնիները», «Կարմիր հրապարակում», «Պուշկինյան հրապարակում» և այլն։ Աշոտ Գրաշին կատարել է նաև բազմաթիվ թարգմանություններ, որոնց մեջ, հաջող ընտրությունների կողքին կան նաև անհաջող գործեր։ Այդ են վկայում Վ. Սոսյուրայից և Անտանաս Վենցլովայից կատարած երկու

թարգմանությունները: Սոսյուրայից կատարված թարգմանությունը կոչվում է «Օ, իզուր չեն...»:

Օ, իզուր չեն հրանդիները որոտացել,
 Օ, իզուր չէ մեր արյունը հողը թացել,
 Օ, իզուր չես գու կամոլին, մայր դալկահար,
 Մանկիկներդ վզից խաշը հունել անբառ:
 Ու խճուղու վրա քայլեր երկաթաձայն,
 Ու շքերթի ելած մարդկանց բյուր ծիածան,
 Ու տեսնում եմ կարծես տեսիլ մի կապուտակ
 Հանքախորշում՝ հանքագործի երգերի տակ, և այլն:

Վ. Սոսյուրայի այս բանաստեղծության իմաստը մշուշապատ է: Չես հասկանում, թե ինչն է գովերգում հեղինակը, հաղթանակը մեր բանակի, թե՞ մի ուրիշ բան. եթե մեր բանակի հաղթանակի մասին է խոսքը, ապա ինչո՞ւ հեղինակը այն համարում է «տեսիլ մի կապուտակ»: Այս բանաստեղծությունը կարելի է դասել Վ. Սոսյուրայի այն անհասկանալի գործերի թվին, որոնց մասին հիշատակել է ընկ. Ա. Կորնեյչուկը Ուկրաինական սովետական դրոշների վեցերորդ պլենումում տված իր վեկուցման մեջ:

Մենք կարծում ենք, որ Աշոտ Գրաշու թարգմանությունների մեջ առավել անհաջող գործ է Անտանյա Վենցլովայի «Հայրենիք» բանաստեղծությունը: Սյոդ գործը չենք քերում լրիվ, սակայն նա իր բովանդակությամբ, իմաստով և կառուցվածքով շատ է հիշեցնում Վ. Սոսյուրայի «Սիրի՛ր Ուկրաինան» նացիոնալիստական բանաստեղծությունը:

Մեր կարծիքով այս բանաստեղծությունը իր բովանդակությամբ արատաւոր է: Այս բանաստեղծության լույս աշխարհ գալը և թարգմանության փոստը ցույց է տալիս, թե ուրբան մեր գրական որոշ շղակներում դեռևս ղգացվում է զգոնության լրթացում, կույր ու անքննադատ մոտեցում դեպի սովետական բանաստեղծների որոշ գործերը, որտեղ երբեմն երևան է գալիս խորթ և օտար բովանդակությունը: Աշոտ Գրաշին չէ՞ր տեսնում, որ այս բանաստեղծության մեջ սովետական Հայրենիքի հոտն անգամ չի փչում: Բացի ողբից ու տխրությունից, բացի սառնամանիքից ու անորոշ մաքսուման կոչից, մենք այստեղ ուրիշ ոչինչ չենք տեսնում:

Այս և նման երևույթների գոյությունը ցույց է տալիս, թե որքան անելիքներ ունի մեր քննադատությունը, մեր պոեզիայի գեղեցիկ պարտեզի միջից մոլախոտերը մաքրելու ուղղությամբ:

Բանաստեղծ Հ. Շիրադի, Աշոտ Գրաշու և մյուսների համար պետք է պարզ լինի, որ աբստրակտ, սոցիալիստական բովանդակությունից զուրկ, բնականաշական գույներով զարդարված հայրենիքի ինքնաբավ գովերգությունը, անցյալ գրականությունից եկող հնամաշ հայրենաբաղձությունն է, որը հագիվ թե այսօր հուզի սոցիալիզմի ինդուստրիալ զարկերակով ոգևորվող սերնդին:

Ավելին. պետք է հիշել, որ աբստրակտ և ապոլիտիկ հայրենասիրությունը արտահայտում է ազգային սահմանափակ հայրենասիրություն և սողանք է բացում բուրժուական նացիոնալիզմի երևան գալուն: Այսօր Հայաստանը փոփոխել միայն նրա բնականաշական գույներով, ինչպես արեւ են նախասովետական հայ բանաստեղծները, միանգամայն դատապարտելի է:

Հայաստանի աշխարհագրական դիրքն ու բարեմասնությունները գարերի ընթացքում համարյա անփոփոխ են մնացել, սակայն նրա սոցիալ-քաղաքա-

կան պատկերը արմատապես փոխվել է: Կարևորը, վճռականն այդ է, որ պետք է ոգևորի մեր գրողներին: Այժմ Հայաստանը պետք է երգվի իր սոցիալ-տնտեսական և կուլտուրական բազմահարուստ գույների մեջ, պետք է ցույց տրվի նախ և առաջ նրա ինդուստրիալ դեմքը, պետք է ցույց տալ այն նոր մարդկանց, որոնք ինտերնացիոնալ գաղափարներով տոգորված՝ սովետական մյուս եղբայրական ժողովուրդների հետ միասին, մաքառում են հանուն խաղաղության, հանուն ազգերի համերաշխության, հանուն կոմունիզմի:

Մեր գրողները պետք է խորապես գիտակցեն մեր էպոխայի մեծությունը, մեր օրերի ջերմությունը: Սովետական ժողովուրդը այսօր հաջողությամբ է կենսագործում կոմունիստական հասարակարգ կառուցելու ստալինյան հույակապ ծրագրերը: Մեր գրողների խնդիրն է իրենց գեղարվեստական երկերում լայնորեն պրոպագանդել կոմունիզմի ամենահաղթ գաղափարները: Այդ խնդիրը գրողները հաջողությամբ կլուծեն այն դեպքում, երբ նրանք լայնորեն ընկալեն մեր էպոխայի անցքերն ու իրադարձությունները, խորապես ըմբռնեն և արտացոլեն այն վիթխարի փոփոխությունները, որ կատարվում են մեր էկոնոմիկայի և մարդկանց գիտակցության մեջ, կոմունիզմի հաղթանակի մեր էպոխայում: